ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

02.10.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 767-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 742-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Անկախության փողոցի թիվ 30 հասցեում Գագիկ Զաքարյանին պատկանող սեփական հողամասում ինքնակամ կառուցված շենք շինությունների օրինականացման մասին» թիվ 742-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «(7.78քմ ներքին) 10,97քմ արտաքին մակերեսով առևտրի սրահ, (31,0քմ ներքին) 40,35քմ արտաքին մակերեսով գրասենյակը» թվերը, բառերը և կետադրական նշանները փոխարինել «(7.78քմ ներքին) 10,97քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը՝ կառուցված 2019 թվականին» թվերով, բառերով և կետադրական նշաններով,

2) որոշման 2-րդ կետում « (51,32x3938=202100) երկու հարյուր երկու հազար մեկ հարյուր ՀՀ դրամ» թվերը, բառերը և կետադրական նշանները փոխարինել «(10,97x3938=43200) քառասուներեք հազար երկու հարյուր ՀՀ դրամ» թվերով, բառերով և կետադրական նշաններով:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ***Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ***

2025թ. հոկտեմբերի 02
ք. Գորիս